

պումներով և զգալի պակասներով, վերամշակելի աշխատություն մը կներկայանա և շի կրնա ըլլալ հեղինակավոր ուղեցույց մը ամեն անոնց, որ ապագային պիտի ուզեն

նշգրիտ պատկերը ունենալ մեր գրականության կարևոր նյութերն մեկուն:

ՆԵՐՍԵՍ ԳԱՍԷՊՅԱՆ  
(Բուլղարիա)

ARISTAKÈS DE LASTIVERT, *Récit des malheurs de la nation arménienne*. Traduction française avec introduction et commentaire par Marius Canard et Haïg Berbérian, d'après l'édition et la traduction russe de Karen Yuzbashian. Éditions de Byzantion, Bruxelles, 1973, p. XLV+148.

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏԻ, Պատմութիւն նեղութեանց ազգին հալոց: Ֆրանսերէն թարգմանությունը, նախաբանը և ծանոթագրությունները Մարիուս Կանարի և Հայկ Պերպերյանի: Ըստ Կարեն Յուզբաշյանի հրատարակության և ռուսերէն թարգմանության: «Byzantion»-ի հրատարակություն: Բրյուսել, 1973, էջ XLV+148:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի համատեղ ջանքերով վերջին տասնամյակում ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է հայ դասական մատենագիրների երկերը պարունակող մի արժեքավոր մատենաշար, որն ընդգրկում է պատմագրական վեց կարևոր գործեր: Սրանցից չորսը՝ Արիստակես Լաստիվերցու, Սիմեոն Լեհացու, Առաքել Դավրիժեցու և Զարարիա Քանաբեցու երկերը տպագրվել են Մոսկվայում, իսկ Լրկուսը՝ կարճեցյալ Շապուհ Բագրատունու և Արրա՛ամ Կրետացու երկերը՝ Երևանում: Թարգմանական բարձր մակարդակով կատարված սույն աշխատանքները, որոնց հեղինակներն են գիտնական թարգմանիչներ Կ. Յուզբաշյանը, Մ. Դարբինյանը, Լ. Խանլարյանը և Ն. Ղորղանյանը, հայ պատմագրությունը ռուսերեն ընթերցողին ներկայացնելու իրենց անմիջական դերը կատարելուց բացի նպաստում են մեր մատենագիրների երկերը օտար լեզուներով թարգմանելու գործին: Ասվածի լավագույն ապացույցն է Արիստակես Լաստիվերցու «Պատմության» ֆրանսերեն թարգմանությունը, որը կատարված է Կ. Յուզբաշյանի՝ Մոսկվայում լույս տեսած ռուսերեն թարգմանության՝ հիման վրա:

Անցյալ տարի Բրյուսելում հրատարակված ֆրանսերեն թարգմանությունը կազմում է «Bibliothèque de Byzantion» մատենաշարի 5-րդ հատորը: Մատենաշարն ընդգրկում է համաշ-

խարհային մատենագրության բյուզանդագիտական հետաքրքրություն ներկայացնող նյութեր: Հայ մատենագրի երկի սույն մատենաշարով հրատարակվելը նշան է այդ երկի բարձր գնահատականի:

Թարգմանության հեղինակն է հայագիտական իր վաստակով մասնագետներին արդեն ծանոթ հայագետ Մարիուս Կանարը, որը միաժամանակ հանդիսանում է Փարիզում ֆրանսերեն հրատարակվող հայագիտական հայտնի հանդեսի «Revue des etudes arméniennes» խմբագրական կազմի անդամ: Ռուսերեն թարգմանությունից նրա կատարած ֆրանսերեն թարգմանությունը Կ. Յուզբաշյանի 1963 թ. հրատարակած հայերեն բնագրի նետ համեմատել և ճշգրտել է արգի արտասահմանյան հայագիտության ամենաավագ ներկայացուցիչ Լ. Պերպերյանը, որը հիշյալ հանդեսի հրատարակությունը վարելուց բացի հայտնի է նաև հայագիտական մի շարք գործերով:

Արիստակես Լաստիվերցու երկի ֆրանսերեն առաջին թարգմանությունը կատարվել է ուղիղ 110 տարի առաջ՝ 1864 թ. Փարիզում, ֆրանսիացի հայագետ է. Պրուդոմի կողմից<sup>2</sup>: Աս նվրուպական լեզվով կատարված միակ ամբողջական թարգմանությունն է, որի միջոցով հայ պատմիչի երկը թափանցել է ընդհանուր պատմագիտության սահմանները: Մանավանդ ռուսերեն

<sup>1</sup> «Повествование вардапета Аристакеса „Ластивертци». Перев. с древнеармянского, вступительная статья, комментарий и приложения К. Н. Юзбашьяна, М., 1968.

15 Համդես, № 4

<sup>2</sup> «Histoire d'Arménie... par Aristagages de Lasdiverd; traduite... et accompagnée de notes par M. Everiste Prud'homme», Paris, 1861.

Թարգմանության բացակայության պայմաններում Պրյուդոմի թարգմանությունը անդնահատելի դեր է կատարել հայկական սկզբնաղբյուրի տարածման գործում: Այսուհանդերձ՝ այդ թարգմանությանը հաջորդած ավելի բան մեկ դարի ընթացքում հայտնի են դարձել Լաստիվերցու երկը պարունակող մի շարք այլ ձևաղբեր, որոնք ճշգրտում են ֆրանսերեն անդրանիկ հրատարակության համար հիմք ծառայած հայերեն բնագիրը<sup>3</sup>, մյուս կողմից էլ՝ հրատարակվել են Լաստիվերցուն ու նրա նկարագրած ժամանակին վերաբերող անհրաժեշտ ուսումնասիրություններ<sup>4</sup>, որոնց առկայությամբ ծագել էր ինչպես հայերեն բնագրի վերահրատարակության, այնպես էլ Ֆրանսերեն նոր թարգմանության հարցը: Հայերեն բնագրի վերահրատարակության, ավելի ճիշտ՝ բնական նոր բնագրի հրատարակության պատվավոր գործը ձեռնարկել և 10 լրացուցիչ ձևաղբերի ու նաեւկին տպագիր հրատարակության հիման վրա իրադրոծել է բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանը, որը, ինչպես ասվեց, միաժամանակ հանդիսանում է հեղինակը ֆրանսերեն նոր թարգմանության համար հիմք ծառայած ոուսերեն թարգմանության:

Հենց սկզբից ասենք, որ ներկա ֆրանսերեն նոր թարգմանությունը առաջընթաց բայլ է ոչ միայն ֆրանսերեն նախկին թարգմանության, այլև ոուսերեն թարգմանության և նույնիսկ՝ հայերեն բնական բնագրի հրատարակության համեմատությամբ: Բանն այն է, որ ֆրանսերեն թարգմանությունը հրատարակելիս Մ. Կանարը և Հ. Պերպերյանը հաշվի են առել նշված նախորդ բոլոր հրատարակություններում տեղ գրտած մասնակի վրիպումները և ձգտել են ընթերցողին ներկայացնել հայ պատմիչի գործի առավել կատարյալ մի հրատարակություն, միաժամանակ լրացնելով նոր ծանոթագրություններով և մատենագիտական տեղեկություններով: Հատկապես բնագրագիտական փոփոխությունները արվել են Կ. Յուզբաշյանի գիտությամբ: Հայերեն բնագրի հրատարակիչը ֆրանսերեն թարգմանությանը ծանոթացել և իր վերաբերմունքը ցույց է տվել նախքան տպագրությունը:

Ֆրանսերեն ևն թարգմանված ոչ միայն Արիստակես Լաստիվերցու երկը, այլև ոուսերեն հրատարակության համար Կարեն Յուզբաշյանի գրած բնագրի առաջաբանը (բացատրությամբ

հայկական անունների ոուսերեն տառադարձությանը վերաբերող հատվածի, որը ֆրանսերեն թարգմանության համար ավելորդ էլ, ծանոթագրությունները, ինչպես նաև մատենագիտական և հատուկ անունների ցանկը: Ըստ որում՝ ծանոթագրությունները, որոնք ոուսերեն թարգմանության մեջ գտնվում են գրքի վերջում, տեղադրված են ֆրանսերեն թարգմանության տողատակի ծանոթագրությունների բաժնում: Բոլոր այն փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են թարգմանիչների կողմից, վերցված են անկյունավոր փակագծերի մեջ: Կան նաև փակագծերի մեջ չվերցված աննշան փոփոխություններ, որոնք կատարվել են, ինչպես երևում է, Կ. Յուզբաշյանի հեղինակային միջամտությամբ ու գիտությամբ:

Թարգմանության սկզբում գետեղված հակիրճ նախաբանում պատշաճ բարձր գնահատական է տրված հայկական սկզբնաղբյուրին: Ֆրանսերեն ընթերցողին հայտնվում է, որ Արիստակես Լաստիվերցու երկը կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հարևան երկրների XI դարի պատմության համար, անհրաժեշտ լույս է սփռում հայբյուզանդական հարաբերությունների, սելջուկյան արշավանքների, թոնդրակեցիների շարժման և այլ հարցերի ուսումնասիրության վրա և որպես այդպիսին ունի բյուզանդագիտության համար նույնչափ մեծ նշանակություն, որքան և հայագիտության համար: Սույն հանդամանքը, ինչպես նաև ֆրանսերեն անդրանիկ թարգմանության թերի և մատենագիտական հավաքյուտ միավոր դարձած լինելու փաստը առաջադրել են ֆրանսերեն նոր թարգմանության պահանջը:

Լաստիվերցու հիշատակած հայկական անունները ֆրանսերեն թարգմանության մեջ տառադարձության և ննթարկված հիմնականում *Revue des etudes armeniennes* հանդեսում կիրառվող սկզբունքով: Որոշ տերմիններ, որոնց համարժեքները ֆրանսերենում չկա (աղարակ, ավան, աղատ, իշխան և այլն), չեն թարգմանված և թողնված են նույնությամբ: Սրանք բոլորը բացատրված են յուրաքանչյուրին նվիրված առանձին ծանոթագրության մեջ:

Ինչպես Պրյուդոմի ֆրանսերեն նախկին թարգմանությունում և Կ. Յուզբաշյանի ոուսերեն թարգմանությունում, այնպես էլ այստեղ, հայերեն բնագրից կրճատված-հանված են աստվածաշնչային, կրոնական բնույթի այնպիսի հատվածներ, որոնք համաբարիստոնեական գրականության մեջ հանրահայտ բնահանուր գիտելիքներ լինելով՝ որևէ նորություն չեն ավելացնում: Սակայն այստեղ հարկ ենք համարում կրկնելու Լաստիվերցու ոուսերեն թարգմանության առթիվ ժամանակին արված նետեյալ գիտողությունը. «Արիստակես կարելի է միայն, որ այսպես կոչված կր-

3 Պատմություն Արիստակես վարդապետի Լաստիվերցույս, ի վեներտիկ, ի տպարանի Սրբոյն Ազգարու, յամի 1844 — ՌՄՂԳ:  
 4 Լաստիվերցուն վերաբերող նյութերի մատենագիտությունը տե՛ս ներկայացվող ֆրանսերեն նոր թարգմանության IX—XII էջերում:

րոնական բազմաթիվ նման հատվածներ ուսման շնչն թարգմանված... մինչդեռ դրանք մատենադրի ուղի շարունակությունն են և շատ կարևոր նշանակություն ունեն հասկանալու հեղինակին, խորանալու ժամանակի մտածողության նրբությունների մեջ»<sup>5</sup>:

Նույնպես է կրճատվել մանավանդ հետևյալ հատվածը. «Եւ արքայն զուրարկացար, և մեք մեղար. վասն այնորիկ մոլորեցար դերութեամբ ի բաղում ազգս, և եղար իբրև պիղծս ամենեքեան... Եւ որ իցէ, որ կարդայցէ պատմութիւնս այն: Այստեղ կաստիվերցին, հակառակ իր այն հիմնական մտածողության, թե Հայաստանի վրա եկած աղետները հետևանք են մարդկանց դործած մեղքերի, գտնում է, որ մեղքերի պատճառը աւետու բարկությունն է, այդ իսկ պատճառով էլ այլևս Աստուծո անունը տվող չկա: Սա կաստիվերցու աշխարհայացքը բնորոշող միտք է, որը պետք է հայտնի դառնար թարգմանություններից օգտվող մասնագետներին:

Թարգմանիչները մի երկու տեղ (էջ 58, 65—66) ուսերեն թարգմանությունից շեղվելով՝ վերականգնել են այդ թարգմանության մեջ կրճատված որոշ հատվածներ: Այս ճիշտ սկզբունքին հետևելով, կարելի էր վերականգնել նաև հայերեն բնագրի 114-րդ էջի այն հատվածը, որը ուսերեն (էջ 115) և ֆրանսերեն (էջ 104) թարգմանություններում կրճատված է և որի հետևանքով էնթերցողին անհայտ է մնացել այնպիսի մի կարևոր տեղեկություն, ինչպիսին է հայ գերիների կորուստը Թուրքաստանում (ամեր գերիքն հեռացնելը՝ կորեան իբր ի կարմիր ծովուն): Սույն հատվածի կրճատման հետևանքով ուսերեն և ֆրանսերեն թարգմանություններում անհասկանալի է մնացել կաստիվերցուց թարգմանված այն միտքը, թե աստված Թուրքաստանի մեր գեմ օգտադորձեց որպես պատժամիջոց (թե ինչ պատժամիջոց էր սա՝ հայտնվում է միայն կրճատված հատվածում):

Երկուսի մանր վրիպումները հարկ համարեցինք նշելու՝ առաջնորդվելով հետագա թարգմանություններն ու վերահրատարակություններն ավելի անթերի տեսնելու նպատակով:

Միևնույն ցանկությունը մեզ մղում է անելու նաև հետևյալ դիտողությունը: Արդեն ապացուցված է, որ անցյալում գործածված «կաստիվերցի» անվանաձևը ոչ ժամանակների աղճատում

է, իսկ ճիշտ ձևն է «կաստիվերցի»<sup>6</sup>: Աշխարհարար թարգմանության (1971 թ.) տիտղոսաթերթն արդեն կրում է այդ ճիշտ ձևը: Ուրեմն՝ լավ կլինի, եթե ֆրանսերեն թարգմանությունը նույնպես լույս տեսներ ճշգրտված անվանաձևով:

Տեսնելով, որ ուսերեն և ֆրանսերեն թարգմանությունները շարունակել են հրատարակման խնդիրն ձևով՝ օգտակար ենք գտնում ավելացնել մասնագետների ուշադրությունից վրիպած մի վկայություն ևս, որով մի ավելորդ անգամ հաստատվում է, որ ճիշտը «կաստիվերցի» անվանաձևն է: Հայտնի է, որ անվան «փոփոխություն» կատարվել է XVII դարում, և որքան ցույց են տալիս փաստերը՝ Առաքել Գավրիթեցու կողմից<sup>8</sup>: Այս կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Գավրիթեցու երկին քաջածանոթ մատենագետ Վարդան Բաղիշեցին Գավրիթեցու տպգիր գիրքն իր տնօրինած մատենադարանում ունենալուց և ձեռագրացուցակում նշելուց<sup>9</sup> հետո էլ շարունակել է գործածել Արիստակես կաստիվերցու ճիշտ անվանաձևը: Նա կաստիվերցու «Պատմությունը» պարունակող ձեռագիր-ժողովածուի նյութերն իր ցուցակում (Մաշտոցի անվան Մատենադարան, ձ. N 737, էջ 224ր) գրանցել է այսպես. «Ձեռնոր պատմագիրք և ի հետն Ստեփանոս Տարօնացու, որ է Ասոցիկն և Արիստակեսի ՀԱՍՏԻՎԵՐՑՈՅՆ և միս Ղևոնդ պատմագիրք...»: Այս տեղեկությունը, որը Բաղիշեցու ձեռագրացուցակի տպագիր հրատարակության մեջ սխալմամբ բաց է թողնված<sup>10</sup> և հավանաբար այդ պատճառով է վրիպել մասնագետների ուշադրությունից, վերաբերում է կաստիվերցու «Պատմությունը» պարունակող մի արժեքավոր ձեռագրի, որը նույնպես բնօրինակված է Առաքել Գավրիթեցու գրքի տպագրությունից (Լտո՝ 1674 թ.:

7 Գ. Ն ա ն ո ՝ կ յ ա ն, Բանասիրական ճիշգրտումներ. «Պատմա-բանասիրական հանդես», 1967, N 1, էջ 134—136: Որպես տեղանուն «կաստիվերցու» ձևը նույնպես սպասելի է, բայց որպես «Արիստակեսի աղգանուն հին մատենագիրները հաջորդում են միայն «կաստիվերցի» ձևը:

8 Նույն տեղում, էջ 135:

9 «Բ գիրք այլ կայ պատմագիրք, որոց մինն է պատմայ (տպագիր— Բ. Ա.) Առաքել պատմադիրը» («Արարատ», 1903, էջ 180): Գավրիթեցու գիրքը տպագրվել է առաջին անգամ 1669 թ., իսկ վարդան Բաղիշեցու ձեռագրացուցակը կազմված է 1689—1704 թթ. միջոցին:

10 Բաց է թողնված միայն «և Արիստակեսի կաստիվերցուն» արտահայտությունը, որը մենք ձեռագրից բաղելով՝ առաջին անգամ տպագրել ենք «Մատենադարանի բանբերի» 10-րդ համարում (էջ 454, ծան. 83):

<sup>5</sup> «Իսկաներ Երևանի համալսարանի», 1970, N 3, էջ 239:

<sup>6</sup> Արիստակես կաստիվերցի. Պատմություն, Երևան, 1963, էջ 70. սուս. էջ 83, ֆրանս. էջ 61:

Դարձյալ Վարդան Բաղիշէցու պատկերով ընդօրինակված սույն ձեռագրի հիշատակարանում նույնպես գտնում ենք «Լաստիվերցի» ճիշտ ձևով Այսպիսով XVII դարի մեր ամենանշանավոր մատենագրանապետներից ու մատենադետներից մեկը՝ Վարդան Բաղիշէցին, Դավրիժեցուց հետո էլ շարունակում է գործածել անվան այն ճիշտ ձևը, որը առկա է Արիստակես Լաստիվերցուն հիշատակող անխտիր բոլոր մատենագիրների երկերում (ընդօրինակված նախքան Դավրիժեցին): Նա նշանակում է, որ ընդհուպ մինչև XVII դարի վերջը անունը գրվել է ճիշտ: Ուրեմն՝ Դավրիժեցուց սկսվող սխալը շուտով էլ այլևս շարունակվի:

Ֆրանսերեն թարգմանության մեջ կատարված բարեփոխություններից առաջնահերթ նշանակություն ունեն բնագրական ճշգրտումները: Ճշգրտվածների մեջ կան, իհարկե, նաև այնպիսի միավորներ, որոնք ուսերեն թարգմանության մեջ աղավաղված են պարզապես անուշադրության հետևանքով: Դրանցից է, օրինակ, հայերեն բնագրի (էջ 97) «Հարք» տեղանվան (սքազաբադիդն Հարբայ) բացթողումը՝ ուսերեն թարգմանության մեջ (էջ 106): Ֆրանսերեն թարգմանիչներն այս տեղանունը վերականգնել են (էջ 90):

Նույն կարգի վրիպումներից է նաև հայերեն բնագրի (էջ 39) «ամս Լրիս» արտահայտության սխալ թարգմանությունը՝ «три месяца» (փոխանակ «три года»), որը տեղ է գտել ուսերեն թարգմանության 69-րդ էջում: Ֆրանսերեն թարգմանության մեջ (էջ 25) վերականգնված է հայերենի ճիշտ իմաստը («trois ans»): Այս ճշգրտումը կատարվել է, գծախտաբար, առանց որևէ ծանոթագրության, որի հետևանքով ֆրանսերեն և ուսերեն թարգմանությունները համեմատող մասնագետը, հայերեն բնագիրը ձեռքին չունենալու դեպքում, չի կարող կողմնորոշվել, թե ո՞րն է Լաստիվերցունը («Լերե տարի», թե՞ «Լերե ամիս»):

Մեր առածը վերաբերում է նաև ուսերենի (էջ 80) «был подобен цвету вишневых деревьев» արտահայտությանը, որը ֆրանսերեն թարգմանության մեջ (էջ 44) ճշգրտված է այսպես. «étaient semblables au brouillard»: Սա իսկ և իսկ համապատասխանում է հայերեն բնագրի (էջ 56) «բայիցն ցուցանեն զօրինակ» խոսքին: Այստեղ հանդիպող զրարար «բայ» («մշուշ») բառը ֆրանսերեն անդրանիկ թարգմանության մեջ (էջ 59) շփոթված է աշխարհարար «բայնի» (Cetisier, вишневое дерево) բառի հետ: Սույն սխալը, որը ինքնարեբարար թափանցել է

նաև ուսերեն թարգմանության մեջ<sup>11</sup>, ուղղել են ֆրանսերեն նոր թարգմանության հեղինակները, որոնք, սակայն, դարձյալ չեն ծանոթագրել իրենց ուղղածը:

Ռուսերեն թարգմանության մեջ (էջ 103) հայերեն բնագրի (էջ 92) «զօրավոր» բառը վերածանվել է «զօրավար» բառի իմաստով՝ «военачальник»: Այս սխալը նույնպես ուղղված է ֆրանսերեն թարգմանության (էջ 86) մեջ, որտեղ հայերեն բառը թարգմանված է լօտ («զօրավոր») բառի իմաստով:

Ուղղված է նաև 77-րդ Սաղմոսի 61-րդ տան թարգմանությունը և նրան հաջորդող «և որ ի կարգին է» արտահայտությունը (էջ 79): Վերջինս ուսերենում սխալմամբ թարգմանված է «и что далее по чину» (էջ 93): Ֆրանսերեն թարգմանված է «etc» (էջ 67), որը համապատասխանում է աշխարհարար ճիշտ թարգմանության (էջ 51) «և հետևյալը» (= և այլն) արտահայտությանը:

Լաստիվերցու բառապաշարում առանձին տեղ է գրավում «չերանի» բառը: Լ. Պերպերյանը իրավամբ նկատել է, որ Վասիլ Բ կայսեր մահվան կապակցությամբ գործածված «զմահու ցալ ջերանի» արտահայտությունը Լաստիվերցին գործածել է Մակարայեցվոց առաջին գրքում (զլ. Ա, 6) հանդիպող «զախտս մահու ջերանէր» արտահայտության նմանողությամբ: Ֆրանսերեն թարգմանված է այսպես. «Il comprit qu'il a lait mourir» (էջ 25), այսինքն՝ «նա հասկացավ (զգաց), որ մեռնելու է»: Բայց սա շեղում է հայերեն բնագրից, որի համաձայն՝ կայսրը ոչ թե զգում է մահը, այլ պարզապես հիվանդանում է մահացու հիվանդությամբ:

Ֆրանսերեն թարգմանությունը համապատասխանում է Մակարայեցվոց գրքի «և իրրև ետես, թե մեռանի» (չալ շչյա օու առնիչչալէ) արտահայտությանը: Իսկ մեզ հետաքրքրող «զմահու ցալ ջերանի» արտահայտությունը հունարեն բրենագրում առհասարակ բացակայում է. մի փաստ, որը միանալով Մակարայեցվոց առաջին գրքի (Երրայերեն բնագիրը մեզ չի հասել) հայերեն

<sup>11</sup> Ռուսերեն թարգմանության մեջ հանդիպող այս սխալը ժամանակին նշել է Դ. Մանուկյանը (հիշյալ գրախոսականում, էջ 241), որը, սակայն, չի նկատել, որ առաջին սխալվողը ֆրանսերեն անդրանիկ թարգմանության հեղինակն է՝ Պրյուդոմը, իսկ ուսերեն թարգմանության հեղինակը պարզապես անուշադրարար կրկնել է նախորդ թարգմանիչին:

թարգմանության մեջ հանդիպող մյուս շեղումներին, դառնում է ավելի ուշադրավ:

Լաստիվերցին մեկ այլ տեղ (էջ 50) Միխայել կայսեր կապակցությամբ գրում է. «հիանդացեալ դրուն մահու ջերանի», որից նույնպես պարզ երևում է, որ խոսքը իսկապես ոչ թե մահը դրալու, այլ հենց հիվանդանալու մասին է: Ի դեպ՝ Լաստիվերցու սույն նախադասության մեջ «ջերանի» բառը կորցրել է «ջեռանի» բառի իմաստը և նշանակում է հիվանդանալ («հիանդացեալ դրուն մահու հիանդանայ»): «Հիվանդանալ» բառի կրկնությունը այստեղ արտասովոր է, բայց Լաստիվերցին կրկնելու սովորություն ունի: Նա 57, 103-րդ էջերում գրում է «հիանդացաւ զհիանդութիւն»: Ֆրանսերեն թարգմանության մեջ, սակայն, պահպանված է բառի «ջեռանի» իմաստը. «Il tomba malade et s'endormit du brûlant sommeil de la mort» (էջ 39): Սա բառացի թարգմանությունն է ռուսերենի. «Заболел и заснул горячим сном»:

Երբեմն էլ կարելի է նկատել ռուսերեն ճիշտ բառերի փոխարեն ֆրանսերեն ոչ այնքան էլ համապատասխան բառերի գործածության դեպքեր, որոնք, սակայն, աշխատանքի ընդհանուր մակարդակի համեմատությամբ այնպիսին են, որ շարժե նշել: Թարգմանիչները մեծ ջանքեր են գործադրել, որպեսզի միջնորդ լեզվի (ռուսերենի) միջոցով կատարված ֆրանսերեն թարգմանությունը հարազատ մնա բնագրին: Հայերեն բրնագրի հետ ֆրանսերեն թարգմանության համեմատության միջոցով նրանք հասել են այն բանին, որ այժմ գրեթե չի զգացվում, որ թարգմանությունը կատարված է միջնորդ լեզվի միջոցով: Մեր ասածը վերաբերում է մանավանդ Լաստիվերցու այն հատվածներին, որոնք ունեն պատմագիտական առաջնահերթ արժեք (ի տարբերություն զեղարվեստական բնույթի արտահայտությունների):

Ֆրանսերեն թարգմանությանն ենք պարտական նաև մատենագիտական և մեկնարանական բնույթի: այն բոլոր լրացումների համար, որոնցով ֆրանսերեն թարգմանությունը տարբերվում է ռուսերենից: Մեր խոսքը վերաբերում է հատկապես Արիստակես Լաստիվերցու նկարագրած ժամանակաշրջանի մասին տեղեկություններ հաղորդող օտար սկզբնաղբյուրներին և արտասահմանյան պատմագիտության տվյալների օգտագործմանը: Օգտագործված են լրացուցիչ արարական և հունական աղբյուրներ, ինչպես նաև՝ Լ. Գիլեմանի Միջագետքի պատմությունը, Կալերվո Հուուրիի աշխատությունը միջնադարյան զինագործության մասին, Մ. Կանարի՝ Համդանյան-

ների դինաստիային նվիրված հետազոտությունը, Հոնիգմանի, Գրուսեի, Հեվսենի և այլոց աշխատությունները: Հայկական աղբյուրներն օտար ընթերցողին ավելի մատչելի դարձնելու համար դուգանաբար նշված են գոյություն ունեցող եվրոպական թարգմանությունները (օրինակ՝ Ասողիկի ղերմաներեն և ֆրանսերեն թարգմանությունները):

Ավելացված են տեղեկություններ բյուզանդական կայսրեր Միխայիլի և Կոնստանդին Մոնոմախի, հայոց թագավոր Հովհաննես Սմբատի և կաթողիկոս Պետրոս Գետադարձի, Վրաստանի բյուզանդական կառավարիչ Նիկոլասի և այլոց շորժունեության մասին: Լրացված են մի շարք տվյալներ Մանադկերտի գրավման, բյուզանդական վարչական տերմին ԳՅՆԱԻ-ի, Հավաճիճի և այլ խնդիրների վերաբերյալ: Ներգրավված են Մատթեոս Ուոհայեցու, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու և այլ մատենագիրների գուդանի տվյալները: Ամբողջ թարգմանության լուսանցքներում նշված են Արիստակես Լաստիվերցու հայերեն բնական բնագրի (Երևան, 1963) համապատասխան էջերը, որոնց օգնությամբ մասնագետները հեշտությամբ կգտնեն և անհրաժեշտության դեպքում կհամեմատեն ֆրանսերեն թարգմանությունը հայերեն բնագրի հետ:

Մ. Կանարը և Հ. Պերպերյանը Արիստակես Լաստիվերցու երկը ֆրանսերեն հրատարակելով՝ մեծ ծառայություն են մատուցել ոչ միայն հայագիտությանն ու բյուզանդագիտությանը, այլև առհասարակ ընդհանուր պատմագիտությանը:

\* \* \*

Արիստակես Լաստիվերցու ֆրանսերեն թարգմանության համար հիմք հանդիսացած ռուսերեն թարգմանության հետ միասին գրախոսական սկզբում մենք հիշապակեցինք նաև կարճեցյալ Շապուհ Բագրատունու երկի ռուսերեն թարգմանությունը: Այդ կապակցությամբ կկամենայինք հայտնել հետևյալը:

Ավելի բան կեսդարյա հանրահայտ գիտելիք է այն, որ խնդրո առարկա երկը առաջին անգամ Շապուհ Բագրատունուն է վերագրել Գալուստ Տեր-Մկրտչյանը: Այս փաստը նշել են երկին հատուկ ուսումնասիրություն նվիրած անխտիր բոլոր մասնագետները (Հ. Աճառյան, Ն. Ալիխյան, Թ. Ավդալբեգյան): Վերջերս, սակայն, բանասեր Պիոն Հակոբյանը հանդես եկավ մի տեսակետով, որի համաձայն՝ «Գ. Տեր-Մկրտչյանը տվյալ բրնագիրը Շապուհ Բագրատունու գրածը չի համարել», «հայագետն այդ մարզում միանգամայն անպարտ է», նա «դյուրախար նորելուկ չէր հա-

յազգիտության մարզում» և այսօր կարիք չունի ներողամտության «նայազգիտության դեմ իր երբեք չզործած հանցանքի համար», Շապուհի անունը նրան վերագրելը կնշանակեր «զգիտությանը լավ ծառայություն չմատուցել» և «նեոհարհարված» հասցնել Գ. Տեր-Մկրտչյանին (ՀՍՍՀ ԳԱ «Լրարեր», 1973. N 8, էջ 103—105)։

Չարձադանքիով մեր բարեկամ բանասերի խոսելու ոճին, հայտնենք, որ հիշյալ արտահայտությունները հիմնավորելու համար վկայակոչված միակ փաստն այն է, որ Գ. Տեր-Մկրտչյանն իր արտագրած և հրատարակության պատրաստած նորահայտ բնագրի վրա գրած է եղել ոչ թե Շապուհ Բագրատունու անունը, այլ՝ «Հացունյաց խաչի նորագյուտ խմբագրությունը յուր շարունակությամբ»։ Այս խորագիրը Պ. Հակոբյանը համարում է Գ. Տեր-Մկրտչյանի «գրավոր կամքը» և պահանջում է հաշվի նստել նրա հետ։ Սակայն նա չի նկատել, որ Գ. Տեր-Մկրտչյանը «Հացունյաց խաչ» կարող էր կոչել ոչ թե իր արտագրածը, այլ նրան նախորդող բնագիրը։ Իսկ իր արտագրածին վերաբերում է միայն «յուր շարունակությամբ» արտահայտությունը, որից պարզ երևում է, որ մեծանուն գիտնականը դեռևս որոշած չի եղել այդ բնագրի իսկությունը։

Գ. Տեր-Մկրտչյանի «գրավոր կամքի» հետ միասին գիտությանը հայտնի է նաև նրա «բանավոր կամքը», որի հետ նույնպես հաշվի չունստել չենք կարող։ Պ. Հակոբյանը ճիշտ չի ընկալել կարծեցյալ Շապուհի առաջաբանում զբանցված այդ բանավոր կամքը. «Մահվանից առաջ հայտնել էր (Ե. Տեր-Մկրտչյանը—Ե. Ա.) Հուսիկ արքեպիսկոպոսին, որոշ վերապահություններ և Տիրայր Եպիսկոպոսին, որ դա է մինչև այժմ կորած Շապուհ Բագրատունու Պատմությունը»։ Մեր ընդգծած «որոշ վերապահություն» արտահայտությունը, ինչպես տեսնում ենք, վերաբերում է միայն Տիրայր Եպիսկոպոսին, այնինչ՝ Հակոբյանը կարծել է, թե դա վերաբերում

է նաև Հուսիկ արքեպիսկոպոսին (էջ 103—104)։

Այսպիսով՝ գոյություն ունեն գրավոր կամքը («յուր շարունակությամբ» արտահայտությունը, որը փաստորեն ոչինչ չի ասում) և՛ Հուսիկ արքեպիսկոպոսին անվերապահունեն հայտնված բանավոր կամքը (Շապուհ Բագրատունու անունը)։ Ո՞րն է նրանցից առաջնայինը։ Այսօր այրողներս որոշել չենք կարող, որովհետև կանգնած ենք դեպքից առնվազն կես դար հեռավորության վրա։ Ուրեմն պետք է ունկնդրենք Գ. Տեր-Մկրտչյանին անձամբ տեսած ու յսած մարդկանց։ Իսկ նրանք իրենց խոսքն ասել են ավելի քան որոշակի ու հաստատ, այսինքն՝ զրքի վրա դրոշմել են Ե. Տեր-Մկրտչյանի անունը, իսկ առաջաբանում էլ հայտնել են, որ Գ. Տեր-Մկրտչյանի արտագրածի վրա գրված է եղել «Հացունյաց խաչի» անունը։ Այս անունը բացահայտ հայտնելուց հետո, եթե նրանք կարևորություն չեն տվել զրան և գիրքը հրատարակել են ընդառաջելով բանավոր կամքին՝ կնշանակի նրանց հայտնի է եղել, որ առաջնայինը այդ կամքն է։ Գիրքը հրատարակող ինստիտուտը 1921 թ. գրել է. «Էջմիածնի Դիտական ինստիտուտը հրատարակում է այս արժեքավոր երկը Շապուհ Բագրատունու անունով, համաձայն աշխատասիրողների (Գ. Տեր-Մկրտչյանի և Մ. Տեր-Մովսիսյանի—Գ. Ա.) առաջարկության՝ բանասիրությանը թողնելով հեղինակի անձի վերջնական պարզաբանությունը»։ Ինչպես տեսնում ենք, ինստիտուտի համար երկրայնի է եղել Շապուհի հեղինակության հարցը, բայց որ Ե. Տեր-Մկրտչյանն առաջարկել է գիրքը տպագրել Շապուհի անվամբ՝ դա կասկածից վեր գտնված փաստ է եղել։ Ուրեմն՝ շարունակենք հավատալ Գ. Տեր-Մկրտչյանի ժամանակակիցներին (որոնք հպիվ թե մեզանից ավելի պակաս էին հարգում ու մեծարում մեծ գիտնականին)։

Քանախր. գիտ. պոկտոր Գ. ԱՐԳՈՐՅԱՆ

EDITH NEUBAUER, *Armenische Baukunst vom 4. bis 14. Jahrhundert*, Dresden, 1970.

ЭДИТ НОЙБАУЕР, *Армянская архитектура IV—XIV вв.* Дрезден, 1970.

Небольшая работа немецкого ученого Эдит Нойбауер, судя по конспективности изложения, свидетельствует о том, что она имеет в виду широкий круг читателей, желающих получить общее представление об

истории развития средневековой архитектуры Армении.

Работа состоит из введения, трех глав, примечаний, списка литературы и иллюстраций.